ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2022 թվականի հոկտեմբերի 21-ից 28-ը

Ամերիկայի Միացյալ Նահանգներ գործուղման արդյունքների մասին

1. Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը

Ներսես Զեյնալյան - ՀՀ պետական եկամուտների կոմիտեի (այսուհետ՝ ՊԵԿ) Միջազգային համագործակցության վարչության պետ

Գարիկ Մինասյան - ՀՀ ՊԵԿ Արևմտյան մաքսատուն-վարչության պետ

Արտաշես Ղամբարյան - ՀՀ ՊԵԿ Հարավային մաքսատուն-վարչության պետ

Արման Մատինյան - ՀՀ ՊԵԿ Հյուսիսային մաքսատուն-վարչության պետի տեղակալ

Ռուզաննա Կուսիկյան - ՀՀ ՊԵԿ Տեղեկատվական տեխնոլոգիաների վարչության ռիսկերի վերլուծության և կառավարման բաժնի պետ

2. Գործուղման վայրը և ժամկետները՝

Ամերիկայի Միացյալ Նահանգներ հոկտեմբերի 21-ից 28-ը

3. Հրավիրող կողմը՝

ԱՄՆ Պետական դեպարտամենտ

4. Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)՝

Սահմանի համալիր կառավարման գործընթացներին սահմանային հսկողություն իրականացնող մարմինների ակտիվ ներգրավման և ԱՄՆ առաջավոր փորձի ուսումնասիրման նպատակով ՀՀ պետական եկամուտների կոմիտեի ներկայացուցիչները Արտահանման վերահսկման և սահմանային անվտանգության (EXBS) ծրագրի շրջանակներում ճանաչողական այց են կատարել Ամերիկայի Միացյալ Նահանգներ:

Այցի շրջանակում մի շարք աշխատանքային հանդիպումներ և քննարկումներ են տեղի ունեցել Ամերիկայի Միացյալ նահանգների Մաքսային և սահմանային պաշտպանության գործակալության (U.S. Customs and Border Protection, CBP), Արտահանման վերահսկման և սահմանային անվտանգության ծրագրի (EXBS), ԱՄՆ Առևտրի դեպարտամենտի արդյունաբերություն և անվտանգություն գործակալություն (Bureau Industry and Security of US Department of Commerce, BIS) ներկայացուցիչների հետ:

Կողմերը՝ բարձր գնահատելով երկկողմ համագործակցության մակարդակը, որը էլ ավելի դրական ընթացք է ստացել ՀՀ ՊԵԿ Նախագահի՝ ԱՄՆ կատարած աշխատանքային այցից հետո, կարևորել են հայ-ամերիկյան համագործակցության շարունակական զարգացման հեռանկարները մաքսային ոլորտում, քննարկվել են նաև, մաքսային ծառայության ոլորտում առկա մարտահրավերներին անդրադարձ կատարելու հնարավոր ձևաչափերը:

Հանդիպման ընթացքում առանձնակի կարևորվել է երկու երկրների միջև մաքսային հարցերով համագործակցության և փոխգործակցության վերաբերյալ պայմանագիր կնքելու հարցը: Վերջինիս նախապատրաստական աշխատանքների վերաբերյալ կողմերը փոխանակվել են կարծիքներով և դրական են գնահատվել գործուն քայլերը ուղղված վերոնշյալ պայմանագրի ստորագրմանը:

Հայկական պատվիրակությունը առաջարկել է նաև քննարկել պայմանագրի ստորագրման վայրը և մեծ պատրաստակամությամբ առաջարկել է քննարկել ստորագրման արարողությունը Երևանում կազմակերպելու հարցը:

Ռապիսկան Սիսթեմս

ԱՄՆ կատարած այցի շրջանակներում ՀՀ ՊԵԿ ներկայացուցիչները այցելել են Ռապիսկան Սիսթեմս ընկերություն, որտեղ ՀՀ ՊԵԿ վերահսկողության համակարգերի կատարելագործման նպատակով տեղի են ունեցել մի շարք քննարկումներ: Մասնավորապես՝ օրակարգում են եղել Արտահանման վերահսկման և սահմանային անվտանգության ծրագրի (EXBS) ծրագրի շրջանակներում սպասվող 2 տեխնիկաների համար կազմակերպվող դասընթացները, 2 ռենտգենյան շարժական սարքերը Հայաստան տեղափոխելու հարցը: Փոխանցված տեղեկության համաձայն՝ արտահանման թույլտվության ստանալուց հետո կսկսվի սարքավորումների տեղափոխման գործընթացը Հայաստանի Հանրապետություն:

Ռապիսկան Սիսթեմս ընկերությունում ՀՀ ՊԵԿ ներկայացուցիչներին է ներկայացվել նաև S2 Global ապրանքանիշի համակարգերը: ՊԵԿ ներկայացուցիչների կողմից մանրամասն հետաքրքրություն է ցուցաբերվել վերոնշյալ ապրանքանիշի սարքավորումների նկատմամբ և ընդգծվել է, որ հետագայում անհրաժեշտության դեպքում լրացուցիչ առաջարկով հանդես կգան:

Վայքեն Դետեքշն

Վայքեն Դետեքշն ընկերություն կատարված այցի ընթացքում ՀՀ ՊԵԿ ներկայացուցիչները ծանոթացել են ներկայացված տեխնիկաների հնարավորություններին, մասնավորապես՝ մանրամասն ծանոթացել են շարժական զննող սարքերի գործածությանը պրակտիկայում, ինչպես նաև ներկայացվել է համապատասխան կրթական ծրագրերի նպատակահարմարությունը ՀՀ ՊԵԿ անձնակազմի համար: ՊԵԿ ներկայացուցիչները կարևորել են հետագա համագործակցության հնարավորությունը Վայքեն Դետեքշն կազմակերպության հետ:

Բրաունսվիլ (Տեխաս)

Բրաունսվիլ, Մեքսիկայի հետ պետական սահման կատարած այցի ընթացքում տարածաշրջանային անցակետի ղեկավար կազմի հետ իրականացված հանդիպումների շրջանակներում հայկական կողմին է ներկայացվել իրենց լավագույն փորձը, տեխնիկական հնարավորությունները սահմանային վերահսկողության ոլորտում, ինչպես նաև մանրամասն ներկայացվել է վերոնշյալ տեխնիկաների մեթոդական կիրառությունը:

5. Քննարկված թեմաները՝

- ԱՄՆ կատարած այցի ընթացքում քննարկվել է երկու երկրների միջև մաքսային հարցերով համագործակցության և փոխգործակցության վերաբերյալ պայմանագիր կնքելու հարցը,
- կարևորել են հայ-ամերիկյան համագործակցության շարունակական զարգացման հեռանկարները մաքսային ոլորտում,
- քննարկվել են մաքսային ծառայության ոլորտում առկա մարտահրավերներին անդրադարձ կատարելու հնարավոր ձևաչափերը,
- ՀՀ ՊԵԿ վերահսկողության համակարգերի կատարելագործման նպատակով ուսումնասիրվել են տեխնիկական հնարավորությունները,
- Ուսումնասիրվել է ԱՄՆ լավագույն փորձը սահմանային վերահսկողության ոլորտում:

6.Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը՝

- Այցի շրջանակներում մի շարք հանդիպումներ են տեղի ունեցել Ամերիկայի Միացյալ նահանգների Մաքսային և սահմանային պաշտպանության գործակալության (U.S. Customs and Border Protection, CBP), Արտահանման վերահսկման և սահմանային անվտանգության ծրագրի (EXBS), ԱՄՆ Առևտրի

դեպարտամենտի արդյունաբերություն և անվտանգություն գործակալություն (Bureau Industry and Security of US Department of Commerce, BIS) ներկայացուցիչների հետ, որոնց շրջանակներում կարևորել են հայ-ամերիկյան համագործակցության շարունակական զարգացման հեռանկարները մաքսային ոլորտում,

- Իրականացվել են այցեր Ռապիսկան Սիսթեմս և Վայքեն Դետեքշն ընկերություններ՝ ներկայացված սարքավորումները ուսումնասիրելու նպատակով,
- Այց է կատարվել Բրաունսվիլ (Տեխաս)՝ Մեքսիկայի հետ պետական սահման՝ ուսումնասիրելու տարածաշրջանային անցակետի տեխնիկական հնարավորությունները, վերջիններիս մեթոդական կիրառությունը, ինչպես նաև լավագույն փորձը սահմանային վերահսկողության ոլորտում:

7. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը՝

- ԱՄՆ կատարած այցի շրջանակներում ձեռք են բերվել մի շարք պայմանավորվածություններ, մասնավորապես՝ քննարկվել է երկու երկրների միջև մաքսային հարցերով համագործակցության և փոխգործակցության վերաբերյալ պայմանագրի ստորագրման փուլը ավարտին հասցնելու հարցը,
- ուսումնասիրվել են ներկայացված սարքավորումները,
- պայմանավորվածություն է ձեռք բերվել իրականացնել կարիքների գնահատում ՀՀ մաքսային վերահսկողության ոլորտում և վերջինիս արդյունքները ներկայացնել ամերիկյան կողմի գործընկերներին

8. Ստորագրությունը, ամսաթիվը

Արտաշես Ղամբարյան

11/2/2023

X

ԱՐՏԱՇԵՍ ՂԱՄԲԱՐՅԱՆ

Signed by: GHAMBARYAN ARTASHES 2103860322

1.11.2023թ.